

էթէ կը ներէք՝ ըսեմ։ Քանի որ այս  
մեր եղացրները ոյսքան կը հակառաւ  
կին և կը պնդեն և երբէք զիջում չեն  
ցուցներ, և չեն ուզեր համազուիլ,  
հրաման ըսէք՝ որ Հայոց Պատրիարքին  
փոխանորդը նախ թաղ կնքէ, և այսպէ-  
սով մնանին կը լուծուի խնդիրը։ ո

Այս խօսքը թէ պէտ և զուարձա-  
քանութիւն մի էր, այլ կերպիւ իւիք  
ճշմարտութիւն մի եւս ուներ իր մէ-  
ջն, քանի որ մեր բարեխնամ Տէրու-  
թեան հարազատ հպատակն եւմք։ Եւ  
այս խնդրյն լուծում մը տալու հա-  
մար կանչեցին նախ ։ ատինաց կողմէն  
եկած կարգաւորը յառ անձին սենեակ  
մի, և անոր դուքս ենելն յետոյ Յու-  
նաց Պատրիարքը կանչեցին նոյն սենեա-  
կը դարձեալ առանձին, և ապա լուծում  
մը գտնալու համար հարկ եղաւ քըն-  
նել թէ Պաղեստինու Երկրին մէջ ո՞ր  
ազգը կամ հասարակութիւնը յառաջ  
է բնակութեամբ քան զիիւն։ ուս  
ափ ժողովն լուծուեցաւ առանց ինչ  
որոշման։

(Կարունակէլք։)

## ՀՈՅՍ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ԺԹ. Դարու մէջ ահա տարի մ՝  
ալ ողջունեցինք, բայց այս դարը մար-  
գկային ազգի զարգացման լուսաւոր  
դարն է։

Ազգի մի զարգացում իւր ներբին  
և արտաքին կացութենէ կախումու-  
նի, և ազգի մի կացութիւն այն ժա-  
մանակ բարւոք է երբ լուսոյ մէջ  
կ'ապրի։

Որ և իցէ ազգ երբ խաւարի մէջ  
կ'թափառի և խաւարի մէջ կ'գործէ,

թշուառ է նա միշտ, թշուառ և իւր  
ապագայն, և հետեւաբար միշտ գը-  
լրման ենթակայ, բայց երբ լուսոյ  
մէջ կ'ապրի և կ'գործէ, երջանիկ է նա,  
երջանիկ և իւր ապագայն, վասն զի  
ազգի մի բարօրութիւն միշտ լուսէ  
կը ծնի։

Այս, Երկնային պատգամ մի է  
այս որ միշտ մահացու սրտեր կը յու-  
ղէ, այն պատգամ սրբազնն, որ զմար-  
դիկ ի զարդացումն կ'հրաւիրէ։ Քա-  
նիներ լոյս աղաղակելով թռան ան-  
մահութեան հովիտը, զօր իրենք լու-  
սոյ աշխարհ քարովելով յայս ի սիրու  
թռան։ Քանիներ լոյս, լոյս մարդկու-  
թեան գոչելով և կրկնելով զայն սլա-  
ցան այն Վամահին ծոցը, որ նոյն լոյ-  
սը ու հուրը նոցա սրտի խորանի մէջ  
վառած ու բորբոքած էր։ Թռան նո-  
քա և մարդիկ սկսան զարգանալ, և  
սկսան թօթափել այն գարաւոր սեաւ  
փոշին իրենց ճակատուց վրայէն, զօր  
անգութ ժամանակը իբր մարդկու-  
թեան նախատանաց սեաւ կնիք մի  
թողուցած էր ի յիշատակ։

Ով էին այս լուսոյ սրբազնն նա-  
հատակները։ Ովարդկութեան բա-  
րերաբներ։ Ուր անջնջելի մնաց նոցա  
սուրբ յիշատակը։ Ովարդկութեան  
զարգացման տաճարներու մէջ։

Ա ասն զի, ուր լոյսը հոկայքացը  
յառաջադիմեց, հօն մարդկութեան  
զարգացումը տաճարներ կանգնեց։  
և երախտագէտ սրտեր հօն պատուե-  
ցին այս լուսոյ նահատակաց սրբա-  
զան յիշատակը, և հօն երկրպագին  
գոհ և ուրախ սրտիւ այն օրհնեալ  
գերագոյն Եցին անուան որ նոյն լու-  
սով նոցա սրտերը վառած ու բորբո-  
քած էր։ Ա ասն զի զարգացումը սոր  
վեցուց թէ ազգի մի լոյսը այն ատեն  
վառ ի վառ կը փայլի, երբ մարդ-  
կութեան զարգացման բարերաբնե-

րու յիշատակը կը պատուի, և ազգի մի զարդացումը այն ատեն կը յառաջսդիմէ, երբ խրախոյսն ու յուրը կը վառէ և կը բորբոքէ զարդացման յետագայ նահատակաց եռանդուն սրտերը, Դարերէ յառաջերկնային պատուամ մի էր այն որ մահացուաց զարդացման մարդասէր նահատակի մի շրթէ թռչելով գնաց զարդացման և լուսոյ պաշտպան բարերարաց սրտից տաճարի սեմոց վրայ դրօշմուեցաւ թէ “Ուր պսակ՝ անդ զարդացումն : Ես ալնոյնը կը կրկնեմ: ուր պսակ, ուր քաջալերութիւն, հոն զարդացում, հոն բարօրութիւն և երջանկութիւն :

Վասն զի նա ինքն յաւիտենական Արդարութիւնն երբ իւր անմահութեան լուսոյ փառաց համանման այս հրաշալի էակն (զմարդն) ստեղծեց և իւր աստուածային զօրութեան մըշտաբարբառու վկայ այս սբանչելի հովտի մէջ իւր անձնիշխան ազատ էակ մի աշխարհիս բոլոր վայելքները ու բարիքները վայելել սահմանեց, նա ինքն որ լոյս էր և լուսոյ Վստուած, իւր այս չքնաղ արարածի իւր մարդաէր գթութեան գրաւական եղող լոյսն ընձեռել շնայեց, շնորհեց և մարդոյն լոյս, օրհնեց մարդկութիւնը, որպէս զի մարդիկ կարողանան այս լուսոյ շնորհիւ իմանեալ իրենց պարտաւորութիւնքն ու իրաւունքները և ըստ այնմ շարժելով պահելու պաշտպաննել զանոնք: Ուստի էակ մի երբ այս լուսոյ գոյութիւնը ուրանալով խաւար քարողել կ'իշխէ, այն ժամանակ աստուածութեան ահաւոր մատը կ'ասիպուի դրօշմել նորա դըժ խեմ ճակատու վրայ “ամբարիշտ” բառը, բառ մը որ սոսկում ընծայել միայն գիտէ մահացուաց:

Վմբողջ ազգեր որք այս լուսոյ զի.

Նուոր գրուելով զլոյսն յարդեցին, նոքա զարդացան . և ազգեր որք ուրացան և նախապատիւ համարեցին խաւարի մէջ ապրիլը քան լուսոյ մէջ, նոցա լոկ անուանքն այսօր ազգութեանց շարքի մէջ մարդ միայն կրնայ գտնել, խկ աշխարհի մէջ անհատ մի երբէք:

Լոյր, այս՝ սատուածային շնորհը, ուր կը փայլի, հոն մարդկային կենաց բարօրութիւն ալ կայ, և հոն մարդկութիւնը կը յառաջադիմէ, և ազատ սրտեր հոն միայն կրնան ազատաբար յառաջ որոտալ: Ծայց խաւարը ուր իւր սեաւ թեւերը տարածած և հոգւոյ աչեր կուրացած կը թագաւորէ, հոն թշուառութիւն և խեղճութիւն, ուր խաւարանէր էակներ միշտ զլոյսն հայհցելով՝ խաւար կ'աղաղակեն . վասն զի խաւարը նոցա անօրէնութեանց ոճրից և բռնութեանց գործակից է միշտ :

Լուսոյ ձայնը նուիրական է, քաղցը և ախորժ մահկանացու լսելեաց, ուստի խաւարի մէջ ծնած ու սնած այն գմբաղդ մարդը երբ լոյս նշմարելով կ'սկսի խլոտիլ, ահա խաւարը երբ անգութ հրէշ մի կ'աղաղակէ “կ'եցիր” . Ո՞ւ պիտի ըլլայ ուրեմն այս մարդացաւ հրէշի ախոյշեանը :

Ո՞ւ վեհ սրտիւ առ ստն հարկանելով ամէն խոչք և խութք, հուսկ ուրեմն պիտի յառաջադիմէ և պիտի յառաջացնէ ընդ իւր խաւարի մէջ գտնուած թշուառ խմբեր :

Ի՞նչէ ազգութիւն, կը հարցուի: Ո՞ւ արդկութեան խումբ մի, լեզուաւ և հայրենեօք մի: Ի՞նչով կը բաղկանայ ազգ մի: Անհատներով: Ի՞նչով անհատի կրնան յառաջադիմել: Ո՞ւ սովո՞ն լոյսն: Պիտիկաւ: Այս, պսակ յերկնից եւ ՚ի մարդկանէ: Ուստի

աղդ մի երբ չունի լցու, և կարողութիւն կամ հաճութիւն առ ՚ի չնորդ հել պսակ, թողջ յուսայ բնաւ զարդացում. այլ գլորում, գլորում ՚ի վիճն թշուառութեան և հիքութեան, վիճ սոսկալի, ուր գլորիլթէպէտ դիւրին՝ բայց ելումը դժուարին և թերեւս անկարելի :

| ՚իս կ'աղաղակէ մարդկութեան զարդացման այս լուսաւորեալ դարը, մարդկութեան զարդացման փափագող սրբաղան է ակներ . պսակ կը կրկնեն զարդացման և լուսոյ համար նահատակեալ դարերէ անտի չօրցած կմախքներ, կործանում, գլորում, վերջապէս թշուառութեան վիճն ձեղ կ'սպասեն, ո խաւարի մէջ դեգերող մարդկութե թշուառ խմբեր : Փութացէք լուսոյ տաճարը, զարդացման այն միակ օֆտարանը, փութացէք և պսակներ թափել այն վեհ գլուխները, որք մարդկութեան զարդացման լցու ձեղ մատակարարել կարողպիտի ըլլան, ապա թէ ոչ ժամյառաջ գլորեցէք թաղուեցէք այն ձեղ նման վատ աղդաց համար պատրաստեալ դատապարտութեան անդնդոց յատակը, որու յաւիտենական խուփը ինքն Կատուած դնելով մարդկութիւնը նախատնաց սեաւ ինքաւ պիտի կնքէ զայն ՚ի յիշատակ վատութեան ձեր և ՚ի սոսկումն այլոց յառաջադիմասէր աղդաց :

Վասն զի, ո՞լ վառեց այդ լցու մարդկութեան սրտի մէջ: Կատուած: Ո՞վ այդ լուսով փրկութեան յուսաց: — Մարդկութիւնը: Ուրեմն անշուշտ Կատուած և մարդկութիւնն է դատախազ այն աղանց՝ որ նոյն լուսոյ գոյութիւնը ուրանալով մարեցին զայն վատաբար իրենց սրտի մէջ: Կատուածութիւնը այս լցու սրտի մէջ հաստատեց, այս լցու սրտի զարդացման

թելերու թրթուման շարժառիթն է . այս լուսոյ շնորհիւ մարդկուս սրտի զգացման թելերը թրթուալով աղաղակ մի, ձայն մի է, որ յանկարծ կը թուշի կը սրանայ սրտի խորերէն և կը կրկնուի . յառաջատանշ . և մարդկութիւնը նոյնը կը կրկնէ՝ յառաջատանշ:

| Կիմի կութալնա ուրեմն որ սոյն սրբաղան ձայնի իւր ականջը կը խնուռ . անիմի կութալ որ չը կրկներ ինքն եւս նոյն նուիրական բառը, որ մարդկութեան զարդացման և փրկութեան ձանաւ սրարհը կ'առաջնորդէ: Ո՞վ կրնայ ուրամանալ, միթէ մարդկային աղդի զարդացման այնչափ բարիքները որք լուսէ կը ծնին, և ո՞վ կրնայ ասել թէ մարդիկ թշուառ կ'ըլլան երբ լուսոյ մէջ ապրին կամ գէպ ՚ի զարդացում յառաջադիմեն: Նըէշ մի՛ մարդկութենէ դատապարտեալ ձիւալ մի է նա՝ որ մութի մէջ գործել կը փափաքի և կը գործէ, անիմից և նախատանաց արժանի վատ մի որ խաւարը լուսէն նախապատիւ համարելով խաւար կը քարոզէ մարդկանց: Ո՞հ այնպիսւ ոյն վատ անունը դժոխոց սեաւ սեմոց վրայ մարդ միայն կրնայ կարդար մարդու լուսով ստեղծուած և լուսոյ մէջ գործելու սահմանուած է ակ մի է և ոչ խաւարի: Մարդս լուսոյ Կատուածոց պատկերն է, այս լցու միայն կրնայ մարդուս ձանցնել իւր սուրբ պարտաւորութիւններն, որ առ Կատուած և առ մարդն:

| Կակ մի՛ առաքինի և մարդասէր է երբ իւր նմանւոյն կը կարեկցիւ արդարէ՝ երբ տկարին իրաւունքն կը պաշտպանէ կամ կը յարգէ, երբ կարողէ զայն սանակոխել, բայց է ակ մի սուրբ է և սրբաղան, երբ իւր նըմանւոյն իրաւանց պաշտպանութեան կամ նորա փրկութեան համար արիւն կը թափէ: Ո՞վ է այս պարտաւորութիւններն,

թիւնքն մարդուս քարողոցն : — | լուր  
Ակզըունք մի կամ օրէնք այն ա-  
տեն գերադոյն կրնաց համարուիլերը  
նորա հիմը արդարութիւն և հիմնա-  
դիրն արդար մի կամ սուրբ մի ըլայ ,  
և լցուը նոյն սկզբանց կամ օրինաց  
գրքի մէջ փայլի և զարդացումը հոն  
բարձր ՚ի զլուխ թագաւորէ : Օրէնք  
մի սկզբունք մի վատթարէ՝ երբ անի-  
բաւութիւնն հիմնէ և հիմնադիրն  
բռնաւոր մի կամ բարյապէս տիկար  
մի եղած է , և ուր լցուը նսեմ և զար-  
դացումը կաղն ՚ի կազ կը բայլէ : || Ճ-  
րագործ է նա՛ որ նոյն սկզբան կամ  
օրինաց գրքոյկը ոչնչութեան այն վի-  
հը նետել որու խուփը և կնիքը մարդ-  
կութեան արդար ձեռքը ինքն կը դնէ  
և կը գրոշմէ : Վ ան զի աղդի մի բա-  
րօրութիւն իւր օրինաց պահպանու-  
թենէ ալ կախում ունի , բայց այնպի-  
սի օրինաց պահպանութենէ՝ որու  
յսոր ՚ի զարդացում մղէ և ոչ ՚ի կոր-  
ծանում և ՚ի գլորում :

Ո՞վ պիտի այս մարդուս այդ կա-  
րողութիւնը որ իւր օրինաց կամ ըս-  
կզբանց գրքոյկը քննէ ու դատէ : — | լուր \*

Լ ոյս , այս է մարդկութեան զար-  
դացման միակ առաջնորդը :

Օրէնք մի ուր բազմաց ձայնը  
խղդուած է կամ բռնաբարուած՝ հոն  
և դարձեալ թշուառութիւն և գլո-  
րում :

Մարդկութեան բարերար մի աս-  
տուածութեան ընտիր պաշտօնեայ մի  
“Զայն բազմաց , ձայն Վ տուծոյ” ը-  
սաւ . ես ալ նոյնը ըսելով՝ կը կըրկ-  
նեմ թէ՝ ձայն բազմաց ձայն Վ տու-  
ծոյ այն ատեն՝ երբ լցուը ընդհանու-  
րին կամ գոնէ բազմաց սրտի մէջ կը  
վառի : Վ ան զի ինչ բարիք կոմ ինչ  
զարդացման յօյս կրնաց յաւսացուիլ  
այն խուժանէն երբ խաւարի Վ լիպար

րի խաւարի մէջ ապրող խուժանի ձայ-  
նը երբ Վ ստուծոյ ձայն ընդունիլը՝  
իմարութիւն է : Օ արդացման ձայն  
մի որ լուսաւոր սրտէ կը բղխի , նա-  
խասատիւ է միշտ հաղարաւոր ձայ-  
ներէ , որ խաւար կ'աղաղսկեն . լոյր՝  
այս կը բարովէ կը սորվեցնէ թէ մար-  
դիկ պարտին միշտ իրենց կենաց բա-  
րօրութեան շաւիզը որմնելև պարտին  
հետեւիլ այն ձայնին , որ ՚ի բարօ-  
րութիւն կ'առաջնորդէ , թէ և մի  
ըլայ , և ոչ հաղարաւոր ձայներու  
որք միշտ խաւար կը կանցութառուեն ,  
և միմիայն զմարդիկ ՚ի թշուառու-  
թիւն առաջնորդէլ գիտեն :

Լ ուսաւորեալ օրտերու ձայն երբ  
կը խղդուի իրենց սրտի մէջ , կամ կը  
բռնաբարուի , ամբողջ ազգութեան  
մի յետադայ սերունդը անշուշտ սիր-  
տի հեծէ , սիրտի հեծէ այս իւր ար-  
խուր վիճակին վրայ՝ զօր թողուցին  
իւր հարքն և հաւքն անմիտք , և ա-  
նիծից շանթեր սիրտի անգաղար տե-  
ղայ նացա ցուրտ շիրմաց վրայ փախա-  
նակ զի չյարդեցին բարյալիսն Ճշմա-  
րիտ լցուը և ըլ ճանցան աղդի մի զար-  
դացման կարեւոր սկզբունքները , և  
չանցին աղդի մի ՚ի բարօրութիւն ա-  
ռաջնորդող կենատու ձայներուն :

Վ երջապէս լուսաւորութիւնը աղ-  
դերու զարդացում ըստեցաւ , բայց  
ինչ զարդացամ կը կրնաց յուսացուիլ  
այն աղդէն , երբ խաւարի մէջ կ'ապ-  
րի և կը գործէ , ինչ բարօրութիւն  
կրնաց յուսաւ այն աղդէը , որու ան-  
համները խաւարի մէջ ապրելով լու-  
սէ միշտ հեռի կը փախչին , և ինչ կրնաց  
յուսաւ ընդհանուր մարդկութիւնը  
այն խմբեն որ իւր բարերարաց պատի  
ընձեռել կամ գոնէ լոկ քաջալերել  
ըլ գիտէ : — || լինչ :

Ուստի մասնաւորելով ըսածնիս՝  
պատմենք ուրեմն թէ Հայ աղգը ու-

Նեցան լրս , և երբ , և այժմ լրւաց  
մէջ կ'ապրի թէ խաւարի , և ի՞նչպէս :

(Ըստահավելք)

1870 Յունիոն . 7  
ՀԵՐԱԿՈՎԻՑ :

Լորապետ Տ.  
Մինասեան :

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ՈՒՍՄԱՆ  
ՕԳՈՒՏՆ ՈՒ ՄԽԻԹԱՅՐՈՒԹԻՒՆՔԸ

Ազգաց մատենագրութիւնք մեղ  
մատենիշ կը ցուցընեն՝ որ թէ նախ  
նի և թէ նոր գարերու մէջ ազգի մը  
կամ ժողովրեան մը գէպ ՚ի բարցա-  
կան յաւաջադիմութիւն , գէպ ՚ի բա-  
րցական կեանքը առաջնորդողը միշտ  
կրօնական միտումը եղած է : Նեթա-  
նոսութեան ասեն Յունաց մեծ պար-  
ծանքն էր բազմատուածեան կրօնին  
վրայ հիմնեալ փիլիսոփայութիւնը և  
այլ ճշմարտութիւնք կամ գեղար-  
ուեսոք : Այնպէս և ուրիշ ազգաց :  
Ասկայն երբ խաչը յաղթանակեց , ա-  
մեն ինչ որ իրեն ընդգէմէր , անհետ  
եղաւ : Կստուածք իրենց տուճարեե-  
րու աւերակաց տակ ամօթափարտ  
միացին . խաչի յաղթական դրօշը ծառ-  
ծանեցաւ այն աւերակաց վրայ , և  
խաչի պարծանքը ափրապեաեց ամեն  
սրտերու , ամեն հոգիներու և ամեն  
խիզերու վրայ : Արան այնուհետեւ  
մարդիկ քրիստոնէական կրօնի ուսման  
շնորհիւ և խաչին լսւով լրւաւորիւ  
որով տեսան ճշմարտութիւնը որ մին-  
չեւ այն ժամանակ մարդիրանց համար  
ամպամած էր , ինքը զինին Վետա-  
րանի բազեաց մէջ նեւ աեցին և խաղա-  
զութեամբ ապրիլ սկան :

Շշմարիս է որ , թէպէտ և աշ-  
խարհիս վրայ ապահով և երջանիկ

ապրելու տենչը ընդհանութէ , ամեն  
ոք կը ջանայ հանգիստ ապրելու մի-  
ջոցներ գտնել : Իայց Տայրագոյն որւ-  
խալ մը կամ կուրութիւն մը կայ այս  
իզգին մէջ , այսինքն կան շատ մար-  
դիկ , որք կրօնքէն դուրս , արտօաքց  
Վետարանին կ'որսնեն այդ միջոցները  
և յանձնապատճենութեան անարդ  
հօգւով ամեն բանի կարող , ամեն  
բանի հմաւու կը կարծեն զիրենք . և  
երբեմն ալ իրենց հոգւց կուրութիւ-  
ներանին գծած շաւիոը և ցու-  
ցրցած միջոցները խիստ կը համարին ,  
և ծանր՝ կրօնի քաղը լուծը : Ի հարկէ  
չենք կրնար բանել և կարելի չէ հաւա-  
տալ իսկ որ այսպէս թիւր դատողնե-  
րը ճանցած են լստ ամենայնի կրօնի  
հոգին , գդացած Վետարանի քաղց-  
րութիւնը և միիթարութիւնը , եւ  
թէ ունին լուսաւոր աչք նորա ճըշ-  
մարտութիւնները տեսնելու : Վա-  
լնդ հակառակը անոնք են , որոնք  
հոգւց մեծութիւնը առ ոչինչ կը  
դնեն , և երջանկութիւննին ոտյն խա-  
բուսիկ կենաց մէջ գտած կերպազնէն ,  
հոգւով անձնատուր են աշխարհի  
ունայնութեանց և սրտով դաշն են  
կնքեր հակառակ կալ ու մնալ ճշմար-  
տութեան ընդ միշտ :

Ասկայն աշխարհի զօհ եղող այդ-  
ապիկար մարդը , այսպիսի վատ և  
մայի կեանք մը վարելու համար բնաւ  
աշխարհ չէ եկած , իւր կոչումը մէծ  
և վեմէ , և իւր առջին մինչեւ Վո-  
տուծց նմանելու խիստ մեծ առար-  
եւ մը կայ : Վշխարհի անձնամասն  
ըլլալ մարդուն խիստ անպատէհ է ,  
վան զի ինքը երկնաքաղաքացի ըլլալու  
համար ստեղծուած է , իւր Վրարշն  
փառքն ըլլալու համար ծնած է : Իւր  
կութքին տակ գտնեուած սիրար ճըշ-  
մարտութեան համար միայն ոէտքէ  
բարախէ , և սէրը միայն ասպնջակա-